ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

#4 | Դեկտեմբեր 2017թ.

Հարգելի գործընկերներ

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի անձնակազմի և անձամբ իմ անունից,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ,

Ցանկանում եմ առողջություն, երջանկություն և արևային ջերմ օրեր:

Թող 2018 թվականը լինի խաղաղության և նորանոր ձեռքբերումների տարի:

Հարգանքով՝

Արմեն Մելկիկյան

Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային ծրագրի ԱՆՀ-ի թողարկման մեկնարկը տրված է

Ս.թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային ծրագրի մրցույթի գնման ընթացակարգն ու ՀՀ կառավարության աջակցության համաձայնագրի նախագիծը, որից հետո դեկտեմբերի 27-ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը հայտարարեց Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի առաջարկ ներկայացնելու հրավերի (ԱՆՀ) թողարկման մեկնարկը:

Մրցույթի հիմնական փուլի հրավերներ են ուղարկվել կարճ ցանկում ներառված թվով 10 միջազգային ընկերությունների և կոնսորցիումների, որոնք արդեն անցել են մրցույթի նախաորակավորման փուլը: Առաջարկի ներկայացման համար տրամադրվել է 70 օր: Մրցույթի արդյունքներով հաղթող կճանաչվի այն ընկերությունը կամ կոնսորցիումը, որը կառաջարկի էլեկտրաէներգիայի ամենացածր սակագինը: Ծրագիրը նախատեսում է Գեղարքունիք մարզի Մեծ Մասրիկ համայնքում կառուցել մինչև 55ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան:

Հայաստանում չգազաֆիկացված համայնքների և համայնքային էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր

Ս.թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության Հիմնադրամի տնօրեն Արմեն Մելկիկյանը և Կոնվերս Բանկի գլխավոր տնօրեն Արթուր Հակոբյանը ստորագրեցին համագործակցության պայմանագիր, որի շրջանակներում կիրականացվեն ինչպես Համայնքային նշանակության էներգաարդյունավետ, այնպես էլ Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագրեր: Ծրագրի նպատակն է Հայաստանի համայնքներում ֆինանսական կազմակերպությունների միջոցով բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը և ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի ոլորտում:

Ծրագիրը ներկայացնելու նպատակով Հիմնադրամում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որին մասնակցում էին Հիմնադրամի, Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների և Կոնվերս Բանկի ներկայացուցիչները: Հանդիպման մասնակիցները տեղեկացան ծրագրի մասնակցության հնարավորություններին և ձեռք բերվեցին պայմանավորվածություններ հետագա համագործակցության վերաբերյալ: Սույն ծրագրերը հնարավորություն կտան նվազեցնել ոչ արդյունավետ էներգասպառումը և ընդլայնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործումը:

Էներգետիկների միջազգային օր

Դեկտեմբերի 22-ին՝ տարվա ամենակարճ լուսային օրը, էներգետիկները նշում են իրենց մասնագիտական տոնը՝ էներգետիկի օրը: Օգտվելով առիթից՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը շնորհավորում է բոլոր էներգետիկներներին մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթելով անվտանգ և արդյունավետ աշխատանք իրենց դժվարին և պատասխանատու գործում:

Ձեր ամենօրյա աշխատանքի շնորհիվ մարդկանց ապահովում եք լույսով և ջերմությամբ:

Էներգետիկ ոլորտը համարվում է տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը, որում իրականացվում են առաջընթացի և զարգացման ծրագրեր, որոնք մեր երկրի համար առանձնահատուկ նշանակություն ունեն: Եվս մեկ անգամ շնորհավորում ենք բոլոր էներգետիկներին՝ ցանկանալով արդյունավետ աշխատանք և նորանոր ձեռքբերումներ:

Չգազաֆիկացված համայնքներում աշխատանքները շարունակվում են

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և ԱԿԲԱ Լիզինգ ՎԿ-ի հետ համատեղ իրականացնում են Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում մեկնարկից մինչ այսօր չգազաֆիկացված համայնքների բնակիչների կողմից ստացվել է 200 հայտ, որի ուսումնասիրության արդյունքում տրվել է 196 դրական եզրակացություն, 4 հայտ մերժվել է:

Իրականացված էներգախնայողության ծրագրի արդյունքներ

Դիլիջան քաղաքի արտաքին լուսավորություն

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը էներգախնայողության ծրագրի շրջանակներում համայնքներում իրականացրել է փողոցային լուսավորության աշխատանքներ: Դիլիջան քաղաքում փողոցային լուսավորության ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ միջոցառումները՝ արտաքին լուսավորության շիկացման լամպերի փոխարինում համարժեք լուսավորություն ապահովող ֆլյուրուսցենտային լամպերով, փողոցային լուսավորության դրոսելային սնդիկային լամպերով լուսատուների փոխարինում համարժեք լուսավորվածություն ապահովող նատրիումային բարձր ճնշման լամպերով: Վերոնշյալ էներգախնայող աշխատանքների շնորհիվ հաջողվել է ապահովել շուրջ 45,2% խնայողություն և ավելացնել լուսավոր փողոցների քանակը:

Ավարտվեց ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքի էներգախնայողության առաջին ծրագիրը

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի հետ համատեղ իրականացնում են Հայաստանի Հանրապետության համայնքների էներգախնայողության ծրագիր, որի նպատակն է Հայաստանի համայնքներում բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը:

Առաջին համայնքային էներգախնայողության ծրագիրն իրականացվում է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղում, որի շրջանակներում իրականացվել է հետևյալ էներգախնայողության միջոցառումները՝

- ***Համայնքի արտաքին արհեստական լուսավորության բարելավում***
- ***Արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրում համայնքային կառույցներում***
- ***Արևային ջրատաքացման համակարգերի տեղադրում համայնքային կառույցներում***
- ***Արևային ջրատաքացման համակարգերի տեղադրում անհատական տնային տնտեսություններում***

Վերոնշյալ աշխատանքները իրականացվել են համայնքի «Արվեստ Մշակութային դպրոց ստուդիա» ՀՈԱԿ-ի, «Արյուսակ» մանկապարտեզի, համայնքապետարանի շենքերում, ինչպես նաև շուրջ 15 տնային տնտեսությունների տանիքներում: Համայնքներում Էներգախնայողության ծրագրի նպատակն է նվազեցնել ոչ արդյունավետ էներգասպառումը և ընդլայնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործումը: Կատարված աշխատանքները կնպաստեն բնակիչների ամսական էլեկտրաէներգիայի և ջրատաքացման համար ծախսվող էներգիայի և դրանց դիմաց վճարվող գումարի կրճատմանը, հետագայում նաև զրոյացմանը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում CO2 արտանետումների կրճատումը կկազմի տարեկան 105 տոննա:

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է ‹‹Աջակցություն Էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում›› ծրագիրը

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է ‹‹Աջակցություն Էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում›› ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել էներգախնայողության միջոցառումների ֆինանսավորմանը Հայաստանի ՓՄՁ-ներում: Ծրագիրը շարունակվում է և ծրագրի շրջանակներում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի փորձագետների կողմից իրականացվել է 178 էներգետիկ ուսումնասիրություն:

Ծրագրի շրջանակները՝

178 էներգետիկ ուսումնասիրություն, որոնցից՝

- 162-ը պարզեցված էներգետիկ ուսումնասիրություն՝ (ներդրման գումարը ոչ ավել 80 մլն ՀՀ դրամից)
- 12 էներգետիկ ուսումնասիրություն՝ (ներդրման գումարը 80 մլն ՀՀ դրամից ավել)
- 2 նախնական էներգետիկ գնահատում

Պարզեցված էներգետիկ ուսումնասիրություններից 2-ը ստացել են բացասական եզրակացություն:

Ծրագրի 2016թ. օգոստոսից 2017թ. դեկտեմբերի 28-ը ժամանակահատվածի հիմնական ցուցանիշները.

Դրական եզրակացությամբ հայտերի քանակը՝

174 հայտ

Ներկայացված վարկի գումարը՝

5,884 մլն. դրամ

ԷԽՄ-ներին ուղղված ներդրումը՝

5,752 մլն. դրամ

Ակնկալվող էներգախնայողությունը՝

445,293,299 կՎտԺ

Էներգաարդյունավետությունը՝

36.8 %

CO2 արտանետումների կրճատում՝

164,795 տոննա

Ծրագիրը շարունակվում է:

Երևան, Հայաստան Հանրապետություն
Սայաթ- Նովա պողոտա 29/1
Հեռ./Ֆաքս +374 10 588011
Էլ.հասցե՝info@r2e2.am